ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԲԱՋՅԱՆ ՌՈԶԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՒՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.01 (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետաիրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ԵՐԵՎԱՆ - 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АБАДЖЯН РОЗА АНДРАНИКОВНА

ИСТОРИЧЕСКАЯ ЭВОЛЮЦИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИСТОКОВ И ИНСТИТУЦИОНАЛЬНО-ПРАВОВЫХ ФОРМ НЕПОСРЕДСТВЕННОГО НАРОДОВЛАСТИЯ В ПРАКТИКЕ КОНСТИТУЦИОННОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ НОВЕЙШОГО ПЕРИОДА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01–«Теория и история государства и права; история правовых учений»

Ереван-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Վաղարշյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Եսայան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. հուլիսի 16-ին ժ. 12^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2020 թ. հունիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Տ. Սուջյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, професор **А. Вагаршян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А. Есаян**
кандидат юридических наук, доцент **А.Асатрян**

Ведущая организация: **Институт философии, социологии и права НАН РА**

Защита состоится 16-ого июля 2020 г. в 12^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 5-ого июня 2020 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент **Т. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժողովրդաիշխանության հիմնահարցը մարդկության պատմության մշտական ուղեկիցն է, հետևաբար այն միշտ հրատապ ու արդիական է: Այս պնդման հիմքում ընկած է քաղաքական համակարգի զարգացման այն օրինաչափությունը, որ հանրային իշխանությունները միշտ սպառնալիք են ժողովրդաիշխանության համար և անընդհատ փորձում են այն ոտնձգել, նսեմացնել: Մոնտեսքիոյի առաջադրած այս միտումն անհրաժեշտ է նկատի ունենալ ժողովրդաիշխանության հարցում, և՛ տեսական, և գործնական մակարդակներում:

Թեմայի արդիականության մյուս կողմը կապված է ՀՀ անկախության պահից մինչև մեր օրերը տեղի ունեցող քաղաքական-իրավական գործընթացների գնահատականի հետ: Ակնհայտ է, որ զարգացման միտումները ոչ բոլոր կողմերով են դրական կամ դրանց տեմպերն անբավարար են արդի արագ զարգացող աշխարհի չափանիշների տեսանկյունից: Պատմաքաղաքական այս միտումն ունի բազմաթիվ պատճառներ, և հետևաբար առաջանում է այն անմիջական ձևերի տեսանկյունից քննարկելու և նկատվող օրինաչափությունները վեր հանելու համար: Ատենախոսական այս հետազոտությունը փորձ է հասկանալու ժողովրդաիշխանության համաշխարհային դերն ու նշանակությունը, Հայաստանի նորագույն շրջանի պատմության մեջ դրա գործած և գործող կառուցակարգերը: Հետազոտության պատմական այս ուղղությունը շատ ուսանելի է մեր օրերի համար:

Ժողովրդաիշխանության հարցն ունի նաև առօրեական խնդիր. պարզել, թե արդյո՞ք անկախության շրջանի ձախողումներն ու թերացումները, նաև հաղթանակները կապված են ժողովրդաիշխանության իրացման կառուցակարգերի հետ, եթե կա այդպիսի կապ, ապա ո՞րն է պատմական ամեն մի դարաշրջանի բացթողումը, ժողովրդաիշխանության կառուցակարգի թերությունները և այլն:

Մերօրյա ժողովրդի իշխանության վերադարձի հրապարակախոսական հայտարարությունը կարիք ունի գիտական-գործնական հիմքերով իմաստավորման, հետազոտության, որպեսզի ցույց տրվի արդյո՞ք տեղի է ունեցել ժողովրդից իր իսկ իշխանության «յուրացում», եթե այո, ապա ինչպե՞ս և ինչպիսի՞ սահմանադրական և օրենսդրական քաղաքականություն պետք է մշակվի ու կենսագործվի, որպեսզի տեղի չունենա դրա հետագա յուրացում:

Արդի քաղաքական-իրավական գործընթացներում կարևոր նշանակություն են ձեռք բերում ժողովրդաիշխանության հարցերը՝ որպես անցյալի ռեժիմին չվերադառնալու պայման: Անցյալի սխալների հաղթահարումը հնարավոր է միայն սահմանադրական կարգավորման դրական ու բացասական կողմերի վերհանման, դրա փորձի տեսական ամփոփման դեպքում:

Ժողովրդաիշխանության տեսության և նորմատիվ կարգավորման հարցերի արդիականությունը պայմանավորված է նաև գործնական տեսանկյունից: Իրավական ռոմանտիզմը, որ ապրում էր մեր հասարակությունը անկախության հռչակմամբ, չարդարացրեց իր հույսերը: «Հայկական երազանքը հայտնվեց փակուղում»: Ներկայումս մեր հասարակության մեջ տիրող իրավիճակը կարելի է բնութագրել հույսերի վերածնունդ: Այս կապակցությամբ շատ կարևոր են ժողովրդի իրական ապրումներն և մտածելակերպը, որը ցույց են տալիս սոցիոլոգիական հարցման տվյալները, որոնք մտահոգության տեղիք են տալիս, հրատապ դարձնում հետազոտությունը:

Ատենախոսության նպատակը: Ատենախոսության նպատակն է վեր հանել Հայաստանի երեք հանրապետություններում ժողովրդաիշխանության անմիջական ձևերի ամրագրման ու կիրառման պատմությունը, փորձել հայտնաբերել դրանց, մի կողմից, և ազգային հաջողությունների ու անհաջողությունների, մյուս կողմից՝ օրինաչափ կապը, կարողանալ վեր հանված օրինաչափությունների վրա կառուցված գիտական խորհրդատվությունն օգտագործել մերօրյա սահմանադրական համակարգում ժողովրդաիշխանության կառուցակարգը կատարելագործելու, այն երկրի զարգացման պահանջներին նպաստող պայման դարձնելու համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Օբյեկտը կազմված է բարդ բաղադրատարրերի ամբողջությունից: Հետազոտության օբյեկտի առաջին տարրը ժողովրդաիշխանության տեսություններն են, դրանց արմատավորման ու կիրառման համաշխարհային և տեղական քաղաքական գործընթացի տեսական գնահատականները: Առարկան ներառում է երեք հանրապետություններում ժողովրդաիշխանության ձևերի մասին օրենսդրությունը, ամեն մի փուլի նորմատիվ կարգավորման հիմքում ընկած տեսական հայեցակարգերը, ժողովրդաիշխանության ինստիտուտների համաշխարհային սահմանադրական փորձը:

Հետազոտության խնդիրները կառուցվել են ատենախոսության նպատակներին համապատասխան, այն է՝ կարևորելով անմիջական ժողովրդաիշխանության դերը և նշանակությունը հանրային խնդիրներ լուծելու և զարգացման ու հաջողությունների հասնելու գործընթացում, փորձել ուսումնասիրել և լուծել հետևյալ պատմահիրավական, տեսահիրավական ու գործնական-իրավական հարցերը.

1) վեր հանել հայ քաղաքական-իրավական մտքի նոր դարաշրջանի ներկայացուցիչների, ինչպես նաև կուսակցությունների պատկերացումները ժողովրդաիշխանության, դրա ձևերի մասին, գնահատել դրանք ժողովրդաիշխանության ձևերի արմատավորման համաշխարհային համատեքստում,

2) պարզել նոր դարաշրջանի հայ քաղաքական-իրավական մտքին բնո-

ռոշ առանձնահատկությունները իշխանության իրականացման ձևերի վերաբերյալ,

3) վեր հանել ժողովրդի իշխանության անմիջական ձևերը Առաջին հանրապետությունում, գնահատել դրանց օրինաչափ կապը ժամանակի սոցիալ-քաղաքական պայմանների հետ,

4) ժողովրդաիշխանության հայեցակարգի դիրքերից իմաստավորել իշխանափոխության խնդիրը և գնահատել ՀԽՍՀ-ի հռչակման գործընթացը լեգիտիմության ու լեգալության տեսանկյուններից,

5) վերլուծել ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրության «սոցիալիստական ժողովրդաիշխանության» առանձնահատկությունները, ժողովրդաիշխանության ձևերի նկատմամբ մերժողականության պատճառները,

6) ուսումնասիրել «անմիջական ժողովրդաիշխանության ձևերը» 1937 թ. Սահմանադրությամբ, պարզել դրանց շրջանակի սահմանափակ լինելու պատճառները,

7) վերլուծել «սոցիալիստական դեմոկրատիայի» տեսության էվոլուցիան խրուշչովյան հալոցքի տարիներին, պարզել անմիջական ժողովրդաիշխանության ձևերի նկատմամբ տեսական հայացքների հատկությունները,

8) վեր հանել անմիջական ժողովրդաիշխանության տեսության ու իրավական ամրագրման հիմնահարցերը գորբաչովյան վերակառուցման շրջանում,

9) խորհրդային վերջին շրջանի ժողովրդաիշխանության ձևերը դիտարկել դրանց շրջանակի ու կիրառման համաշխարհային փորձի համատեքստում,

10) պարզել այն գործոններն ու պայմանները, որոնց ազդեցությամբ ընտրվեց Երրորդ հանրապետության սոցիալ-քաղաքական զարգացման ուղղությունը, այդ թվում ժողովրդաիշխանության ձևերի շրջանակը,

11) գնահատել 1995 և 2005 թթ. խմբագրությամբ Սահմանադրություններում ամրագրված ժողովրդաիշխանության հայեցակարգը և դրանց նորմատիվ տեսլականը, վեր հանել դրանց սոցիալ-քաղաքական արդյունքները,

12) ամփոփել ժողովրդաիշխանության սահմանադրական ամրագրման առանձնահատկությունները մի շարք ազատական երկրներում և այդ հիմքով արժեքաբանական վերլուծության ենթարկել ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդ.՝ իրավական տեխնիկայի ու բովանդակության առումով,

13) գնահատել 2015 թ. սահմանադրական բարեփոխումները ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի ու կատարելագործման տեսանկյունից, փորձել վեր հանել ապագա իրավական քայլերն այդ ուղղությամբ:

Թեմայի տեսական աղբյուրները: Դրանք տարբերակված են ըստ բաժինների: Նոր շրջանի հայ իրավաքաղաքական միտքի մեջ իշխանության

իրականացման ձևերի մասին հայացքները վեր հանելիս տեսական հիմք են ծառայել XIX դ. 2-րդ կեսի հասարակական-քաղաքական գործիչների երկերը:

Առաջին հանրապետությունում ժողովրդի իշխանության անմիջական ձևերի հիմնահարցերը հետազոտելիս տեսաիրավական և աղբյուրագիտական հիմք են ծառայել Ս.Վրացյանի և Ա.Վաղարշյանի աշխատությունները:

Խորհրդային Հայաստանում ժողովրդաիշխանության հիմնահարցերի հետազոտության հիմք են հանդիսացել խորհրդային սահմանադրական զարգացմանը և տեսական հիմնահարցերին նվիրված ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս հրատարակված մենագրական աշխատանքները, ատենախոսական հետազոտությունները, մասնավորապես՝ Ա. Մուրաշինի, Գ. Ղազինյանի, Ա. Վաղարշյանի, Ա. Ֆարբերովի, Բ. Տոպորնինի, Գ. Ալեքսանդրովի, Կ. Շերեմետի, Մ. Չուդակովի, Ս. Ռուսինովայի, Ս. Ալեքսանդրովի, Է. Բեռնշտեյնի, Վ. Կաբիշևի, Վ. Կոմարովայի, Վ. Կոտոկի, Վ. Մուսախանյանի, Վ. Ռյաժկինի, Վ. Սուվորովի, Օ. Վասյակինի և այլոց:

Հայաստանի երրորդ հանրապետությունում ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի, դրանց սահմանադրական կարգավորման հիմքում ընկած հայեցակարգերի և իրական սոցիալ-քաղաքական արդյունքների հետազոտման համար տեսական-կողմնորոշիչ հիմք են ծառայել արդի իրավագետների հետազոտությունները նվիրված ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական ամրագրման առանձնահատկություններին, մասնավորապես՝ Ա. Բեզուգլովի, Ա. Լուկաշևայի, Գ. Հարությունյանի, Բ. Գաբրիչիձեի, Գ. Դանիելյանի, Գ. Չեբոտարյովի, Լ. Մելիքսեթյանի, Կ. Գաջիևի, Կ. Իվանովի, Հ. Խաչատրյանի, Մ. Բագլայի, Մ. Միխալևայի, Յ. Բեգունովի, Յ. Դմիտրևայի, Յ. Տիխոմիրովի, Ն. Այվազյանի, Ջ. Զիմերմանի, Ռ. Մուխաևի, Ս. Բադալյանի, Ս. Սոլդատովի, Վ. Մամիչևի, Վ. Նազարյանի, Վ. Չիրկինի և այլոց:

Ժողովրդաիշխանության և դրա ձևերի մասին հայ քաղաքական-իրավական միտքը, կուսակցությունների պատկերացումները, սահմանադրական-իրավական հայեցակարգերի գնահատումը կատարվել է համաշխարհային համբավ ունեցող տեսաբանների (Ա. Համլիտոնի, Գ. Ալմոնդի, Գ. Պովելլի, Դ. Սանդերսի, Ե. Բյորկի, Է. Բերնշթայնի, Թ. Ջեֆերսոնի, Ժ. Մեստրի, Ժ.Ժ. Ռուսոյի, Լ. Պայի, Հ. Շումպետերի, Մ. Բունգեյի, Մ. Ռոկարի, Մ. Վեբերի, Յ. Լինցի, Յ. Հաբերմասի, Ջ. Լոկի, Ռ. Գազեյի, Ռ. Դահլի, Ս. Հանթիգթոնի, Վ. Ներսիսյանցի, Ֆ. Շմիթերի) ժողովրդաիշխանության ձևերի համաշխարհային համատեքստի քաղաքաիրավական հայեցակարգերի դիրքերից:

Հետազոտության նորմատիվ-իրավական, փաստաթղթային և սոցիոլոգիական հիմքերը: Նորմատիվ հիմքեր են ծառայել ժողովրդաիշխանության առանձին ձևերին վերաբերող Հայաստանի երեք հանրապետությունե-

ռում գործած և ներկայումս գործող օրենսդրությունը, ժողովրդավարական երկրների սահմանադրությունները: Առաջին հանրապետությունում ժողովրդդահիշխանության ինստիտուտի հետազոտության համար հիմնական հիմք են ծառայել ՀԱԱ ֆոնդերի օրենսդրական աղբյուրները: Հետազոտության համար հիմք են ծառայել քաղաքական և քաղաքական-իրավական բնույթի փաստաթղթերը՝ հայ ազգային կուսակցությունների, կոմկուսի ծրագրերը և այլ փաստաթղթերը:

Ատենախոսության աղբյուրագիտական հիմքերից են սոցիոլոգիական հարցումները, որոնք կատարվել են 2009 թ. Ս. Հակոբյանի ատենախոսության թեմայի շրջանակում իրականացված հարցումների նմանությամբ[1]: Որպեսզի համեմատության ճշգրտությունը պահպանվի, նույն հարցադրումներով 2020 թ. հունվարին կազմակերպվել են հարցումներ[2]:

Ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտությունն իրականացված է պատմականության, անկողմնակալության, գնահատման բազմակարծության, համալիրության սկզբունքներին համապատասխան: Օգտագործվել են նորմատիվ նյութի դասակարգման, ձևական-իրավաբանական, համեմատական-իրավաբանական վերլուծության, համակարգակառուցվածքային վերլուծության մեթոդները:

Թեմայի մշակվածության աստիճանը: Ժողովրդահիշխանության իրավական պատմությունն Առաջին հանրապետությունում ուսումնասիրված չէ:

Խորհրդային Հայաստանի կառավարման համակարգի սահմանադրական ձևավորման, ընթացիկ օրենսդրական կարգավորման հիմնահարցերը որոշ չափով հետազոտված հիմնախնդիրներ են: Խորհրդահայ իրավագետները մարքսիստական դիրքերից կատարել են այդ հիմնահարցերի պատմական զարգացման հետազոտությունը, սակայն հատուկ կանգ չեն առել ՀՍՍՀ-ի սահմանադրական և ընթացիկ օրենսդրության մեջ ժողովրդահիշխանության հիմնահարցերի վրա: Բացառություն է կազմում Վ. Մուսախանյանի մենագրությունը, սակայն այդ հետազոտությունն ունի զուտ տեսական բնույթ, շարադրված է մարքսիզմի գիտակուսակցական գովաբանության դիրքերից:

Երրորդ հանրապետությունում ժողովրդահիշխանության ձևերի հիմնահարցերին անդրադարձել են Գ. Հարությունյանը, Գ. Դանիելյանը, Լ. Մելիքսեթյանը, Հ. Խաչատրյանը, Ն. Այվազյանը, Ռ. Մարանդյանը, Ս. Բադալյանը, Վ. Ստեփանյանը, Վ. Նազարյանը, Վ. Փիլիպոսյանը և այլոք: Սակայն նրանց մեծ մասը հատուկ կանգ չեն են առել ժողովրդահիշխանության ձևերի արդի հիմնախնդիրների վրա: Հետազոտողներից միայն Գ. Հարությունյանը և Ա. Վաղարշյանն են փորձել գնահատել ժողովրդահիշխանության ընդհանուր համակարգը, դրա արդյունավետությունն և զարգացման ուղղությունները, ինչը և հիմք է ծառայել սույն հետազոտության իրականացման համար:

Ժողովրդահիշխանության հիմնահարցերի հետազոտման տեսանկյունից աչքի են ընկնում Ռ. Մարանդյանի, Լ. Մելիքսեթյանի ուսումնասիրությունները, որոնք սակայն վերաբերում են Երրորդ հանրապետությունում հանրաքվեի որպես ժողովրդահիշխանության բարձրագույն ձևի արդիական հիմնահարցերին: Այսպիսով պատմական կտրվածքով, այսինքն՝ Հայաստանի երեք հանրապետություններում ժողովրդահիշխանության ընդհանուր հարցերը, բացի հանրաքվեից, մնացած բոլոր ձևերի հիմնահարցերի հետազոտությունը բաց է:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության հանվող դրույթները: Ամբողջական, համակարգված հերթականությամբ հետազոտվել են անմիջական ժողովրդահիշխանության ինստիտուտները Հայաստանի երեք հանրապետություններում, դրա ձևերի իրավական ամրագրման, կայացման և գործառույթային առանձնահատկությունները, ժողովրդահիշանության ամեն մի տիպի հիմքում ընկած հայեցակարգային բնութագրերը: Հետազոտությամբ փորձ է արվել ոչ միայն ամբողջական կերպով վեր հանել ժողովրդահիշխանության ինստիտուտի կայացման իրավական պատմությունը, այլև առաջ քաշել դրա կատարելագործման ու ժողովրդահիշխանությունն անշրջելի դարձնելու գործնական առաջարկներ:

Հետազոտության արդյունքում մշակվել և պաշտպանության են ներկայացվում գիտական նորույթ պարունակող ժողովրդահիշխանության պատմության ու արդի վիճակի վերաբերյալ հետևյալ տեսական դրույթները.

1. XIX դարի հայ քաղաքական իրավական միտքը չնայած իր գոյատևման աննպաստ պայմաններին, ժողովրդավարության ու ժողովրդահիշխանության տեսական հարցերում զիջելով եվրոպական մտքին իր խորքայնությամբ, բավականին առաջանցիկ էր իր ժողովրդավարական բովանդակությամբ:

2. Առաջին հանրապետության պատմական փորձը հաստատում է, որ ժողովրդահիշխանության կենսագործման համար առաջին հերթին անհրաժեշտ են սոցիալական (համերաշխություն, հոգեմտակերպային, կրթական), այնուհետև սոցիալ-քաղաքական, տնտեսական և այլ պայմաններ:

3. Խորհրդային կառավարումն ի սկզբանե մոնիստական ներկայացուց-

[1] Տե՛ս **Հակոբյան Սևակ,** Պետական ապարատը և նրա զարգացման հիմնական միտումները (ԼՂՀ նյութերի հիման վրա): ԺԲ.00.01 (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետահիրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսություն: Եր., 2009, էջեր 83, 87, 94, 162-163, 110, 115, 116, 118, 155, 169:

[2] Հարցման թերթիկի նմուշը որպես հավելված 1 տե՛ս ատենախոսության վերջում:

չական էր, որը պրոլետարական դիկտատուրայի միայն պետական կառավարման ձևից փորձեց անցում կատարել խառը՝ անմիջական-պետական ձևին: Սակայն նույնիսկ երրորդ սերնդի սոցիալիստական սահմանադրությունները՝ խարսխված «համաժողովրդական պետության» հայեցակարգի վրա, հիմքեր չեն տալիս այդ կառավարումը համարել խառը՝ զուգորդված ուղղակի և անուղղակի ձևերով: Գորբաչովյան շրջանում ժողովրդաիշխանությունը դանդաղ, սակայն հարթում էր իր ճանապարհը: Սական դրա ձևերի ամրագրման ձգձգումը տարավ ամենաթողության: Հենց ժողովրդաիշխանության բացակայությունը կործանեց սոցիալիստական պետությունը:

4. ՀՀ անկախության հռչակմամբ հայ ժողովուրդը XX դ. երրորդ անգամ կանգնեց հանրային-քաղաքական համակարգի կառուցման խնդրի առջև, սակայն արդեն ուներ ընտրության միջոց համարվող քաղաքական ինստիտուտներ, իսկ փոփոխությունների ռազմավարության կառուցումն այլընտրանքային էր և ընտրվեց դասական ազատականությունը:

5. Ազատական ժողովրդաիշխանության «Ժողովրդից, ժողովրդով, ժողովրդի համար» հիմնական սկզբունքից բխում է, որ որոշակի քաղաքական կոնկրետ իրավիճակներում հանրային իշխանության ձևավորման կամ այն այլ քաղաքական ուժերին փոխանցման ընթացակարգը պետք է լինի ոչ միայն լեգալ, այլև լեգիտիմ: Եթե լեգալության պահանջի պահպանումը ոչ միշտ է հնարավոր՝ կախված քաղաքական-իրավական պայմաններից, ապա լեգիտիմ եղանակը պարտադիր է:

6. Երրորդ հանրապետությունը 1995 թ.-ից որդեգրեց ժողովրդավարության մաժորիտար (այլ ոչ թե մասնակցային) տեսլականը, դրա պահպանողական տարբերակով: ՀՀ-ում տեղի ունեցած հասարակական գործընթացների թերությունները նաև այդ ժողովրդավարության հետևանքներն են:

7. Ժողովրդի ինքնիշխանության սահմանադրական սկզբունքից բխում է, որ «իշխանության տեր ժողովուրդը կարող է անել այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ և օրենքներով»: Ժողովուրդը «կարող է անել այն ամենը, ինչը սահմանված է Սահմանադրությամբ» լեգիստական իրավամտածողությունը քաղաքական-իրավական նախադրյալներ է ստեղծում ժողովրդի իշխանության յուրացման համար: Սահմանադրության 2-րդ հոդ. անմիջական ժողովրդաիշխանության միայն երկու ձևերի ամրագրումը ոչ թե շրջանակի սահմանափակում է՝ մնացած ձևերի արգելքի իմաստով, այլ երաշխիք, որ օրենսդրի մտքով չանցնի դրանք չնախատեսել:

8. Օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների շրջանակը պետք է լինի լավարկված ու հավասարակշռված, որպեսզի արտահայտի հասարակական բոլոր խմբերի, ուժերի շահերը: Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ամրագրումը և դրա հետագա կատարելագործումն ունակ են խոհեմության, զսպվածության ու քաղաքական կաշկանդվածության մեջ պահելու տիրող ընտրանուն, պետական բյուրոկրատիային՝ իրենց եսասիրական շահերի իրացման հարցում:

9. 2015 թ. սահմանադրական բարեփոխումները ժողովրդի իշխանության իրականացման ձևերի շրջանակի ընդլայնման և եղածների, հատկապես հանրաքվեի մասնակի կատարելագործման գործընթաց էր: Սակայն դրա հիմքով ընդունված օրենքները չլուծեցին առանձին ինստիտուտների՝ նախկին շրջանից փոխանցված մի շարք հարցեր, իսկ որոշ նորամուծություններով հարուցեցին նորերը: Ապագայի խնդիրն է անմիջական և ներկայացուցչականի ձևերի խելամիտ, լավարկված զուգակցումը, անմիջական ձևերի բոլոր հնարավորությունների ու ներուժի բացահայտումը, որը երաշխիքն է հաշվետու, պատասխանատու, ժողովրդից, ժողովրդով, ժողովրդի համար հանրային կառավարման կայացման համար:

10. Ժողովրդաիշխանության հարցում ապագայի իրավական քաղաքականության հրամայական պահանջներն են՝ ժողովրդաիշխանության եղած ձևերի լավարկում, չեղածների ամրագրում, ժողովրդավարական սոցիալացում և իրավական դաստիարակություն, ժողովրդաիշխանության պատշաճ ձևերի անընդհատ կիրառում, թոթափելով հանրահավաքային, ցուցարարային, համացանցային խաբուսիկ ժողովրդավարության ահագնացող ալիքը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունում ձևակերպվել են եզրակացություններ, որոնք լրացնում են Հայաստանի նորագույն շրջանի պետության և իրավունքի պատմության հետազոտման առարկայի բացերը: Ատենախոսության արդյունքներն ունեն տեսագործնական նշանակություն, կարող են դառնալ մեթոդաբանական ուղեցույց ժողովրդաիշխանության իրավական բարեփոխումների քաղաքականության մշակման համար, նպաստել անմիջական ժողովրդաիշխանության թերությունների վերացմանը, անմիջական ու ներկայացուցչական ձևերի համակարգային հավասարակշռության հաստատմանը: Կարող են նաև օգտագործվել իրավական դասընթացների ծրագրեր, ուսումնական նյութեր պատրաստելիս:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտությունը կատարվել է ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում, որտեղ և իրականացվել է դրա քննարկումը, եզրակացության հաստատումը: Հետազոտական հիմնական դրույթներն արտացոլվել են 6 հոդվածներում: Թեմային վերաբերող զեկուցումներ են արվել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների ու հայցորդների գիտաժողովներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Հետազոտական խնդիրներին համապատասխան ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ցանկից:

Ատենախոսության 1-ին գլխի «Ժողովրդավարության տեսության ու ժողովրդաիշխանության անմիջական ձևերի հիմնահարցերը XX դարասկզբին. Համաշխարհային միտումները և հայկական պետական փորձը» **1-ին ենթագլխում** հեղինակը ներկայացրել է ժողովրդավարության տեսությունները և իշխանության անմիջական ձևերի կիրառման համաշխարհային համատեքստը XIX դ. և XX դարասկզբին: Հաշվի առնելով, որ արևմուտքում XIX դ. աչքի էր ընկնում ոչ միայն պետաքաղաքական մտքի տեսական թռիչքներով, այլև իրական քաղաքական իրավական վերափոխումներով, ատենախոսը Ս. Հանթինգթոնի «ժողովրդավարության ալիքներ» հայեցակարգի համատեքստում փորձում է հասկանալ, թե ի՞նչ պայմաններում էր ապրում հայ ժողովուրդը օտար տերությունների տիրապետության տակ, քաղաքական իրավական զարգացման ո՞ր փուլում էին գտնվում այդ տերությունները:

1-ին գլխի 2-րդ պարագրաֆում՝ «Նոր դարաշրջանի հայ քաղաքական-իրավական միտքն իշխանության իրականացման ձևերի մասին» հեղինակը մատնանշում է այն պատճառները, որոնց ուժով հայ ժողովուրդը XIX դ. չուներ քաղաքական-իրավական հասուն միտք: Սակայն հայոց լուսավորչականությունը XIX դ. 2-րդ կեսին տվեց քաղաքական պտուղ. ասպարեզ իջան ազատագրական խմբերը, կուսակցությունները: Արմենականները չունեին ներհասարակական կյանքի կազմակերպման ինչ-որ սկզբունքների, նաև ժողովրդաիշխանության մասին, առաջարկություններ: Հնչակյանների ծրագիրն ուներ և՛ ազատագրական, և՛ սոցիալ-քաղաքական տեսլական: Ապագա հայկական պետության համար նախատեսվում էր ժողովրդաիշխանության տարրեր՝ համընդհանուր, «ուղիղ ու գաղտնի ընտրություններ», «տեղական, համայնքային ինքնավարություններ»:Դաշնակցությունը նախատեսում էր ժողովրդավարական ընտրական և կառավարման ձևեր, անհատի իրավունքների լայն շրջանակ, ընտրական տարիք էր առաջարկում 20-ը:

1-ին գլխի 3-րդ պարագրաֆում՝ հենվելով Առաջին հանրապետության պետական կառավարման պատմության հետազոտությունների և իր կողմից վեր հանված նորմատիվ ակտերի վրա, հեղինակը կառավարման անմիջական և ներկայացուցչական ձևերի հարաբերակցության չափանիշից ելնելով ներկայացրել է իշխանության իրականացման կառուցակարգը, ներառյալ ժողովրդաիշխանության այնպիսի դրսևորում, ինչպիսին է իշխանության ձևավորման ու փոխանցման լեգալությունը և լեգիտիմությունը, որը հատ-

կապես կարևոր է նոր ձևավորվող պետությունում: Այս տեսանկյունից ներկայացվում են իշխանության երկու ձևերի արմատավորման քաղաքական պատմությունը, սկսած Ռուսական Կայսրության փլուզումից մինչև հանրապետության անկումը: Ենթագլխի բովանդակության հիմքով կառուցվել են համապատասխան եզրակացություններ, որոնք զետեղված են պաշտպանության հանվող դրույթներում և եզրակացության մեջ:

1-ին գլխի 4-րդ ենթագլխում ատենախոսը հատուկ քննարկման է արժանացրել ժողովրդի իշխանության փոխանցման լեգալության սկզբունքի խախտման և կոմունիստական կուսակցական իշխանության հաստատման գործընթացը Հայաստանում: Այդ հարցը հեղինակը համարում է ժողովրդաիշխանության սկզբունքի բովանդակային տարր: Ատենախոսը փորձել է այս տեսական մեկնակետից դիտարկել և գնահատել իշխանության ձևավորման գործընթացը Առաջին հանրապետությունում ու խորհրդայնացման շրջանում, կատարել համապատասխան եզրակացություններ, որոնք զետեղված են պաշտպանության հանվող դրույթներում:

Ատենախոսության 2-րդ գլուխն է «Սոցիալիստական դեմոկրատիայի հայեցակարգը և անմիջական ժողովրդաիշխանության ձևերի հիմնահարցը խորհրդային Հայաստանի սահմանադրական զարգացման ընթացքում»: **1-ին պարագրաֆում** ներկայացված են իշխանության նշանակովի մարմիններից՝ հեղկոմներից ընտրովի խորհուրդներին, խորհրդային հանրապետության ձևով պրոլետարիատի դիկտատուրային անցումը:

Մինչ բուն հետազոտական խնդրին անցնելը և իշխանության իրականացման կառուցակարգը գնահատելն ու տիպաբանելը, ատենախոսը քննարկել է նախադրյալի դեր կատարող երեք հարց՝ ա) ժողովրդավարության զանազան տեսությունները (մրցակցային և համընդհանուր տիպերով), բ) ժողովրդաիշխանության կառուցակարգի չափանիշով ժողովրդավարության դասակարգումները՝ ուղղակի, կիսաուղղակի և ներկայացուցչական, գ) սոցիալիստական կոչված ժողովրդավարության տեսության ձևավորման փուլերը, հայեցակարգային ձևափոխությունները՝ մարքսիզմ, լենինիզմ, ստալինիզմ: Դա հնարավորություն է տվել ամբողջական ըմբռնել ժողովրդաիշխանության նկատմամբ սոցիալիստական մերժողականությունը:

2-րդ գլխի 2-րդ ենթագլխում անիջական ժողովրդաիշխանության հիմնահարցը քննարկվել է ՀԽՍՀ 1937 թ. Սահմանադրության հիմքով: Այնուհետև ատենախոսը հիմնավորում է, որ այն իրականում «խոսքի և գործի հակասության» դասական օրինակ էր: Ատենախոսը մի քանի առումներով հիմնավորում է, որ իշխանությունը վերագրված էր աշխատավորներին, իսկ դրա իրացման կառուցակարգ էին միայն խորհուրդները: Հասարակական կառավարման այդպիսի տեսլականը չէր ենթադրում ուղղակի կառավարման որևէ այլ ձև, բացի խորհուրդների ընտրություններից: Որդեգրած քա-

ղաքական իրավական դոկտրինում խոսքը գնում էր միայն հարցման, ոչ թե հանրաքվեի մասին, որն էլ ընդամենը քարոզչական նշանակություն ունեցող նորմ էր: Այս շրջանում որևէ անգամ չի անցկացվել համաժողովրդական հարցում:

2-րդ գլխի 3-րդ պարագրաֆում ներկայացված են խրուշչովյան հալոցքի շրջանում «սոցիալիստական դեմոկրատիայի» հայեցակարգի ձևափոխման, համաժողովրդական պետության հայեցակարգի մշակման հիմնահարցերը: Ժողովրդաիշխանության աղճատված վիճակը ներկայացվում էր որպես բարձրագույն, առանց սահմանադրական հիմքերի, հենվելով միայն կոմկուսի վերանայված ծրագրի վրա, որում պահանջում էր հանրաքվեների անցկացում: Հեղինակը օրինակներով ցույց է տալիս, որ խորհրդային իրավագետները, վերցնելով ազատական ուսմունքի տեսլականը, բառապաշարը և հարմարեցնելով դրանք սոցիալիստական իրավաքաղաքական տեսությանը, ստեղծեցին գոյություն չունեցող սոցիալիստական ժողովրդավարության մասին հայեցակարգ, օպերացիաներ անելով «ժողովրդական ինքնիշխանության», «աշխատավոր ժողովրդի ինքնիշխանության», «խորհրդային ժողովրդի լիիշխանություն» սկզբունքներով, դրանց երաշխիքներ համարելով ոչ թե ժողովրդաիշխանության ավանդական ձևերը, այլև խորհրդային հասարակության տնտեսական, քաղաքական, դասակարգային-սոցիալական հիմքերը:

2-րդ գլխ 4-րդ պարագրաֆում հետազոտությունն իրականացվել է երկու ուղղությամբ: Նախ, վեր հանել գորբաչովյան շրջանում ժողովրդաիշխանության ձևերի հարցում կատարված նորամուծությունները: Մյուս կողմից, որպեսզի ստացված արդյունքների գնահատականը լինի օբյեկտիվ, բազմակողմանի, հեղինակը որոշել է հաշվի առնել հիմնահարցի համաշխարհային համատեքստը, այսինքն՝ XX դ. վերջերին արևմտյան երկրներում ամրագրված ժողովրդաիշխանության ձևերի շրջանակը, դրանց կիրառման պրակտիկան: Հարցի համաշխարհային համատեքստը հեղինակը համարել է նաև որպես մուտք՝ Երրորդ հանրապետության ժողովրդաիշխանության կառուցակարգն օբյեկտիվորեն գնահատելու համար:

Հեղինակը ցույց է տալիս, որ նախ XX դ.ի վերջին աշխարհում տարածված էին անմիջական ժողովրդաիշխանության բազմաթիվ ձևեր, երկրորդ տարածված էր դրանց աննախադեպ կիրառումը: Այս համատեքստում ատենախոսը բազմակողմանի կերպով ներկայացնում է գորբաչովյան շրջանի տեսական, գործնական ծրագրային ու օրենսդրական քայլերը խորհրդային ժողովրդաիշխանության և դրա նոր ձևերի զարգացման վերաբերյալ:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «Ժողովրդի իշխանության ազատական հայեցակարգը և դրա կենսագործումը Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրական զարգացման գործընթացում» **1-ին պարագրաֆում** ատենախոսը հանրային-քաղաքական կառույցի փոփոխության խնդիրը դիտարկում է 1-ին և 2-րդ հանրապետությունների հետ համեմատության մեջ, վեր հանում հասարակական-քաղաքական զարգացման ուղու ընտրության հնարավորությունների, գործոնների տարբերությունները:

Այնուհետև հեղինակը վերլուծում է զարգացման այլընտրանքային ուղիները և փորձում է վեր հանել ընտրության վրա ազդող բազմաթիվ գործոնները: Հետագա շարադրանքում ներկայացվում են XX դարավերջի ժողովրդավարության տեսությունները, ցույց տալու համար, որ ազատականությունը միայն դրա վարկածներից է, որ ժողովրդավարության տեսության համաձայն սոցիալ-տնտեսական առաջադիմության ապահովման համար անհրաժեշտ է նաև քաղաքական զարգացման կայունություն: Հետևաբար ներկայացվում են կայունության հաստատման երկու տիպային լուծումները՝ ազատական (Ռ. Դահլ, Գ. Ալմոնդ և այլն) ու պահպանողական (Ս. Հանթինգթոն, Ջ. Նելսոն և այլն): Ատենախոսը քննարկելով «Անկախության հռչակագրի» ընդունման պահից ժողովրդավարության արմատավորման քաղաքականությունը, ժողովրդաիշխանության ձևերի կատարելագործման քայլերը, նորերի սահմանման գործընթացը, եզրակացնում է, որ իշխանությունը գործում էր ժողովրդավարական արդիականացման պահպանողական ուղով:

3-րդ գլխի 2-րդ՝ «Ժողովրդաիշխանության ազատական հայեցակարգի սահմանադրական իրավական ամրագրումը 1995 թ. և դրա սոցիալ-քաղաքական հետևանքները» վերտառությամբ պարագրաֆում ատենախոսը հերթով վերլուծության է ենթարկել այնպիսի կարևոր հիմնահարցեր, ինչպիսիք են 1995 թ. Սահմանադրության ամրագրած ժողովրդաիշխանության հայեցակարգը և դրա հիմնադրույթները, ժողովրդաիշխանության անմիջական և ներկայացուցչական ձևերի սահմանադրական հարաբերակցությունը, անմիջական ժողովրդաիշխանության սահմանված ձևերը, դրանց բնորոշ տեսական էությունը և իրավական թերությունները, սահմանադրաիրավական հայեցակարգի տեսական գնահատականը դարավերջի սահմանադրական մտքի կողմից և դրա սահմանափակվածությունը, 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո ընթացիկ օրենսդրական գործունեության ոլորտում ժողովրդաիշխանության անմիջական ձևերի շրջանակի և բովանդակության հարցում դրսևորվող միտումները:

3-րդ գլխի 3-րդ՝ «Ժողովրդաիշխանության սկզբունքի սահմանադրական ամրագրման համաշխարհային փորձը» **պարագրաֆում** մեկնակետը 1990 թ.-ից մինչև 2005 թ. ՀՀ սահմանադրական զարգացման վերլուծության արդյունքներն են, համաձայն որոնց ժողովրդաիշխանության աղճատման գործընթացում որոշակիորեն իր նպաստող դերը կատարեց Սահմա-

նադրության 2 հոդ.՝ սահմանափակվելով դրա միայն երեք ձևերի ընդհանուր ամրագրմամբ: Այս մեկնակետի հիման վրա հեղինակը իրականացրել է հետազոտական երկու խնդիր: Առաջին, ժողովրդավարական այլ երկրների սահմանադրական պրակտիկայում իրավաբանական ի՞նչ բանաձևով է ամրագրված ժողովրդաիշխանության սկզբունքը, այդ բանաձևը ունի՞ նշանակություն դրա կայացման համար: Երկրորդ՝ վեր է հանվել, թե ո՞ր երկրից (կամ երկրներից) է փոխառված ժողովրդաիշխանության սահմանադրական մեր տեսլականը, արդյո՞ք այդ երկրի պատմաքաղաքական պայմանները նման են ՀՀ-ին: Կատարված եզրահանգումները զետեղված են ատենախոսության եզրակացությունում, ինչպես նաև պաշտպանության հանվող դրույթներում:

3-րդ գլխի 4-րդ պարագրաֆում վերլուծելով 2005 թ. սահմանադրական բարեփոխումները, ատենախոսը այն գնահատել է որպես ժողովրդաիշխանության պահպանողական նախորդ ռազմավարության վերարտադրություն՝ ամրագրված սահմանափակ ձևերի մարտավարական վերակառուցմամբ: Գնահատման օբյեկտի շրջանակում ներառվել են ժողովրդաիշխանության սահմանադրական հայեցակարգը և ենթաինստիտուտները (իշխանության պատկանելությունը ժողովրդին, ժողովրդի իշխանության իրականացման ձևերը, ընտրությունների և հանրաքվեի սկզբունքները, հանրաքվեն, տեղական ինքնակառավարումը, քաղաքական-իրավական կոնֆլիկտների լուծման ունակությունը):

3-րդ գլխի 5-րդ պարագրաֆում ատենախոսը ներկայացրել է ժողովրդի իշխանության արդի վիճակը և ապագա քաղաքականության հրամայականները: Հիմք ընդունելով նախորդ շրջանում հիմնահարցերի հետազոտման արդյունքները, հեղինակը եզրակացնում է, որ ժողովրդաիշխանությունը կարիք ուներ էական վերակառուցման, նախ, սահմանադրորեն ամրագրված երկու հիմնական ձևերի, հատկապես հանրաքվեի ինստիտուտին բնորոշ թերությունների վերացումը, այնուհետև նոր ձևերի իրավական ամրագրումը: Ատենախոսը այդ հարցում հիմնավորում է, որ նման իրավաստեղծ աշխատանքի համար, սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտություն չկար, առաջ քաշելով դրույթը, որ ՀՀ Սահմանադրությունը ո՛չ մի խմբագրությամբ չի արգելել անմիջական ժողովրդաիշխանության այլ ձևերի օրենսդրական ամարգրումը: Տառից կախված օրենքական իրավամտածողությունը քաղաքական շարժառիթներով դա չի արել: Այնուհետև վերլուծվել են 2015 թ. սահմանադրական բարեփոխումների գործընթացը, Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունը, ժողովրդաիշխանության հարցում 2015 թ.-ին արձանագրված հայեցակարգային ու առանձին ինստիտուտների ձեռքբերումները, ինչպես նաև բացթողումները: Պարագրաֆի վերջում հիմք ընդունելով իրականացված

սոցիոլոգիական հարցումները, փորձ է արվել կառուցել ժողովրդաիշխանության ապագայի իրավական քաղաքականության հիմնական պահանջներն ու տարրերը:

Եզրակացությունում ներկայացված են կարևոր ընդհանրացումները:

1. Ժողովրդաիշխանության ոլորտում արմատական փոփոխություններն սկսվեցին նոր շրջանում, երբ արևմտյան աշխարհն ապրեց ժողովրդավարացման առաջին ալիքը (Հանթիգթոն), որի դրսևորումներն էին՝ ընտրությունները, ներկայացուցչական կառավարումը: Հայ ժողովուրդը գոյատևում էր աշխարհաքաղաքական միջավայրում, որում կառավարման համակարգերը պետական-մենաշնորհային էին, իսկ անմիջական ժողովրդաիշխանության հանրաճանաչ ձևերն անընդունելի: Ժողովրդաիշխանությունը նոր շրջանի հայ իրավաքաղաքական մտքի օրակարգային հարց չէր: Առավել հրատապ էր ազգային ազատագրական պայքարի խնդիրը:

2. XIX դարի կեսերից ժողովրդավարացման առաջին ալիքը միջազգային գործոնների ազդեցությամբ ներթափանցեց նաև այլ երկրներ: Մասնակի ազատականացման և եվրոպականացման հետևանքով պայմաններ ստեղծվեցին հայ իրականության մեջ առաջադիմական, ժողովրդավարական գաղափարների մշակման, տարածման, գործնական կիրառման համար: Այս շրջանում հայ մտածողները արծարծել են քաղաքական տեսության ու ժողովրդավարության հարցերի բավական մեծ շրջանակ: Նրանց մեծ մասը, բացառությամբ անարխիստների, հասարակական կառավարումը պատկերացնում էին որպես պետական կառավարում՝ որն անկախ իր ձևից պետք է ունենար ընտրական համակարգ և չլիներ բռնապետական: Անմիջական ձևերի նկատմամբ սահմանափակ մոտեցման և մասամբ դրա անտեսման փաստը պայմանավորված էր հայ ժողովրդի գոյատևման քաղաքական պայմաններով: Մյուս կողմից անմիջական կառավարման ձևերը Եվրոպայում դեռևս բազմազան ու համատարած չէին: Հետևաբար, հայ իրավաքաղաքական միտքը միգուցե զիջում էր իր խորությամբ, սակայն համահունչ էր ժամանակի մարտահրավերներին, իսկ պետահիրավական հարցերի արծարծումը գաղափարական նախադրյալներ էին պետականության վերածննդի համար: Ստեղծված հայ կուսակցությունները կառավարումը պատկերացնում էին որպես ռամկավարական հանրապետություն՝ ժողովրդաիշխանության երկու ձևով՝ ընտրություններ և տեղական ինքնակառավարում:

3. Հայաստանի առաջին հանրապետության կառավարման համակարգը իշխանության իրականացման ուղղակի կամ անուղղակի ձևերի հարաբերակցության չափանիշից ելնելով խառն էր, որում գերակշռում էին ներկայացուցչական ժողովրդավարության տարրերը: Հանրապետությունում

իշխանության հիմնադրման ընթացակարգը ժողովրդաիշխանության տեսանկյունից լեգալ ու լեգիտիմ էր: Երկու և կես տարվա գոյության ընթացքում հայ ազգային ներկայացուցչական կառավարման համակարգից անցում կատարվեց բնակչության ազգային և քաղաքական ուժերի ներկայացուցչական համակարգի՝ կազմակերպելով համապետական խորհրդարանական ընտրություններ: Հանրապետությունը որդեգրել էր կառավարման ազատական հայեցակարգը, սահմանվել և կիրառվել են ուղղակի ժողովրդաիշխանության երկու ձև՝ ընտրությունները և տեղական ինքնակառավարումը:

Առաջին հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության այլ ձևերի բացակայությունը բացատրվում է դրա հիմնադրման ու կացության արտակարգ պայմաններով, գոյության պատմական կարճ շրջանով, արտաքին-քաղաքական կարգավիճակի անհստակությամբ, ազգամիջյան հարաբերությունների ոլորտում առկա որոշակի խնդիրներով:

4. Առաջին հանրապետության կառավարությունը, զգալով իշխանությունը հանձնելու անխուսափելիությունը, փորձում էր ապահովել գոնե դրա լեգալությունը, և միայն այդքանով՝ լեգիտիմությունը: Մեծամասնական քաղաքական մերժողականությունը՝ կնքելով իշխանության փոխանցման գոնե նվազագույն լեգալությունն ապահովող համաձայնագիր, Երևան հասնելուն պես հրաժարվեց դրանից, որդեգրեց իշխանազավթումը: Խորհրդայնացման գործընթացում խախտվեց «իշխանությունը ժողովրդից» սկզբունքը, հաստատվեց անլեգալ, ոչ լեգիտիմ իշխանություն:

5. Մարքսիզմի հիմնադիրները սոցիալիստական իշխանության իրականացման ձև էին դիտում ժողովրդավարական խորհրդարանական հանրապետությունը: Ռուս մեծամասնականները հրաժարվեցին դրանից, առաջ քաշեցին սոցիալիստական ժողովրդավարության գաղափարը, իշխանության իրականացման միակ ձև ճանաչեցին խորհուրդները: Մերժվեցին ժողովրդաիշխանության անմիջական ձևերը՝ պահպանելով միայն խտրական, անհավասար ընտրությունները: Նոր ձևավորվող իշխանությունը մենիշխանական պետական կառավարմամբ համակարգ էր, որում տեղ չկար կառավարման անմիջական ձևերին: Ռազմահեղափոխական պայմաններում հիմնադրված կառուցակարգում իշխանության իրականացման միակ սուբյեկտը պետությունն էր, որ կոչվում էր պրոլետարիատի դիկտատուրա, իսկ քաղաքական համակարգի ուղղություն տվող ուժ էր ճանաչվում կոմկուսը:

6. Խորհրդային 1930-ական թթ.. սահմանադրությունները պահպանեցին նախորդ մոտեցումներն իշխանության կառուցակարգի հարցում, որոշ եզրութաբանական փոփոխություններով: «Իշխանությունը պատկանում էր աշխատավորներին», սակայն դրա կենսագործման միակ կառուցակարգը ընտրովի խորհուրդներն էին՝ ներքևից վերև ստորակարգությամբ: Իշխանության անմիջական ձևերից նորամուծություն էին ուղղակի, ընդհանուր, հավասար, գաղտնի քվեարկությամբ ընտրությունները, պատգամավորներին հետ կանչելը, համաժողովրդական հարցումը, որոնք, սակայն, չկատարեցին իրենց սոցիալական առաքելությունը, որովհետև ընտրությունները միակուսակցականության, ամբողջատիրության ու անհատի պաշտամունքի պայմաններում վերածվեցին ֆարսի: Որդեգրված քաղաքական իրավական վարդապետությունը ենթադրում էր միայն պետական կառավարում:

7. Խրուշչովյան հալոցքի շրջանում ժողովրդավարության սահմանադրական տեսլականը առանց հիմքերի գիտականորեն ներկայացվում էր որպես բարձրագույն ժողովրդաիշխանություն: Միակ առաջընթացը պատգամավորների հետ կանչելու կարգի օրենսդրական սահմանումն ու կիրառումն էր: Խորհրդային տեսաբաններն օգտագործելով ժողովրդաիշխանության ազատական տեսության բառապաշարը՝ հորինեցին սոցիալիստական ժողովրդավարության իդեալիստական հայեցակարգ, որը մտավարժանքներ էր անում «ժողովրդի ինքնիշխանություն», «ժողովրդի լիիշխանություն», «ուղղակի և անուղղակի ժողովրդաիշխանություն» և այլ ձևակերպումներով:

8. Երրորդ սերնդի խորհրդային սահմանադրությունները, որոնց հիմքում ընկած էին «զարգացած սոցիալիզմի», «համաժողովրդական պետության» հայեցակարգերը, ժողովրդաիշխանության հարցում, բացի եզրույթային ու իրավատեխնիկական կողմերից, առաջընթաց չարձանագրեցին: Հարաբերականորեն ազատականացված իրավագիտության հույսերը չարդարացան:

9. Վերակառուցման մեկնարկային պահին ամրագրված էր միակուսակցական համակարգով մեկ թեկնածուի մեծամասնական ընտրությունը, պատգամավորներին հետ կանչելը, համաժողովրդական հարցումը և հանրաքվեն: Խորհրդային միության փլուզման պահին, չնայած վերնախավի պահպանողականությանը, զարգացման միտումը տարավ ժողովրդաիշխանության անմիջական ձևերի շրջանակի սահմանափակ ընդլայնմանը, ամրագրված ձևերից մի մասի ժողովրդավարացմանը, մյուսների օրենսդրական կարգավորմանը: Ժողովրդաիշխանության այլ ձևերի ամրագրումը ձգձգվում էր, ինչը տանում էր ամենաթողության, ժողովրդի ինքնակազմակերպման: Հանրաքվեն օրենսդրորեն կարգավորվեց միայն դաշնության փլուզման պահին: Ժողովրդաիշխանությունը դանդաղ հարթում էր իր ճանապարհը՝ հաստատելով իր հաղթարշավի համաշխարհային օրինաչափությունը:

10. Սովետաբանների մի մասը սոցիալիստական համակարգի փլուզման պատճառ է համարում պատշաճ տեսության բացակայությունը, ինչի հետևանքով սոցիալիստական բյուրոկրատիան իր նոմենկլատուրային ա-

վանգարդի գլխավորությամբ խճճվեց: Դրա հետևանքը, թեկուզև վատ, բայց սահմանադրության վերածումն էր ձևական փաստաթղթի, պետական խիստ կենտրոնացված նոմենկլատուրային կառավարման ձևավորումը, որն էլ կործանեց պետությունը:

11. XX դ. վերջին Հայաստանում կառավարման կառույցի ընտրության գրեթե միակ գործոն դարձավ արտաքին-քաղաքական ներգործությունը, ինչի հետևանքով ազատական շուկայական ժողովրդավարությունն ընտրվեց որպես արդիականացման ուղի: Անկախության հռչակագրի ընդունմամբ ուղենիշ վերցնելով ժողովրդի անբաժան իշխանության ազատական մոդելը, գլխավոր խնդիր էր համարվում անմիջական ու ներկայացուցչական ձևերի հավասարակշռված համակարգի ստեղծումը, ինչը քաղաքական կայունության երաշխիք էր: Սակայն, իշխանությունը հետևում էր ոչ թե ժողովրդավարական արդիականացման ազատական, այլ պահպանողական ուղուն: Դրանով են բացատրվում ժողովրդաիշխանության ձևերի չափավորումը, կարևոր որոշումների ընդունումը պետական մարմինների միջոցով:

12. 1995 թ. Սահմանադրությունն ամրագրեց ժողովրդաիշխանության ազատական կառուցակարգ, մերժեց խորհրդային ժողովրդավարությունը, սակայն ամրագրեց երեք անմիջական ձև, որոնց կարգավորումը շատ ընդհանուր էր, առանց կարևոր հիմունքների մանրամասնեցման, ինչը քաղաքական տեսանկյունից ռիսկային էր, որովհետև ստեղծեց հակաժողովրդավարական օրենսդրման սպառնալիք: 1995-2005 թթ.. նկատվում է ոչ թե անմիջական ժողովրդաիշխանության նոր ձևերի օրենսդրական ամրագրրման, այլ ընդհակառակը ժողովրդավարական չնչին նվաճումներից հրաժարման միտում: Տեղական ինքնակառավարումը լինելով նոր ձևավորվող ինստիտուտ չէր կարող դառնալ քաղաքական հակակշիռ, ժողովրդաիշխանության գործուն ձև: Դրանում ևս շատ ինստիտուտներ խեղված կամ անտեսված էին:

13. Հետխորհրդային երկրների սահմանադրական կարգավորումները կարելի է բաժանել երկու խմբի: **Առաջինում** ժողովրդաիշխանության կառուցակարգը տրոհել են երկու մասի, չեն թվարկել դրա անմիջական ձևերը և չեն սահմանափակել դրանց շրջանակը, դրանով տեղ թողնելով հաջորդող դրույթներին կամ օրենքին նախատեսելու ցանկացած ձև: Այս սահմանադրությունները կանխում են օրենսդրի կողմից հայեցողական չկարգավորումը: **Երկրորդում** ժողովրդաիշխանության սահմանադրական ձևակերպումները շարադրված են այնպես, որ անմիջական ձևերի շրջանակը դարձել է սահմանափակ (ընտրություններ և հանրաքվե), հանրաքվեի հիմնադրույթները կոնկրետացված չեն, նախաձեռնում է միայն պետությունը: Այս երկրներում ժողովրդաիշխանության ընդլայնումը կարող էր վերածվել ազգային անվտանգության սպառնալիքի: Հայաստանում այդպիսի գործոն չկար: Ժողովրդաիշխանության նսեմացման պատճառը քաղաքական էր. կայունության շահերից ելնելով որդեգրվեց ազատական ժողովրդավարության պահպանողական ուղին:

14. XX դ. կեսերին ընդունված ազատական տիպի սահմանադրությունները խայտաբղետ են, դրանցում չկա անմիջական ժողովրդաիշխանության ձևերի շրջանակի կոշտ սահմանափակում, իսկ որոշ երկրներում իրավակարգավորումները շատ ընդհանուր են, չմանրամասնեցված: Համաշխարհային փորձը հիմք է տալիս առաջ քաշելու օրինաչափություն. հանրային կառավարման բոլոր ձևերը (ներկայացուցչական, անմիջական, պետական և ոչ պետական և այլն) պետք է լինեն բնահամապատասխան, այսինքն՝ պետության պայմաններին համահունչ, դրանցից բխող:

15. 2005 թ. Սահմանադրությամբ ժողովրդաիշխանության սահմանադրական հայեցակարգը և հիմնական ինստիտուտները մնացին անփոփոխ: Այն ժողովրդավարության առաջընթաց էր, բայց ժողովրդաիշխանության կայուն լճացում: 2005 թ. Սահմանադրությունը ժողովրդաիշխանության նախորդ պահպանողական ռազմավարության վերարտադրությունն էր՝ սահմանադրական ամրագրում ունեցող սահմանափակ ձևերի մարտավարական վերակառուցմամբ: Այն տեղական ինքնակառավարման սահմանադրական ինստիտուտն էականորեն վերակառուցեց, սահմանելով նոր և կարևոր երաշխիքներ: Ամրագրվեց տեղական հանրաքվեն:

16. 2005-2014 թթ.. ընթացիկ օրենսդրական գործունեության մեջ նկատվող միտումները դրսևորում էին նույն օրինաչափությունները, ինչ-որ նախորդ շրջանում: Անմիջական ժողովրդաիշխանությունը զրկվել էր հակակշռի դերակատարությունից, չուներ ազդեցիկ ձևերի պատշաճ շրջանակ, որոնց օգտագործմամբ ժողովուրդը կարող էր հակակշռել պետական իշխանությանը: Ժողովրդաիշխանության սահմանափակ ձևերը ՀՀ-ում չունեին հասարակական կոնֆլիկտների կանխման ու լուծման ունակություն: Արդյունքում քաղաքական տարաձայնությունների լուծման միակ միջոցը դառնում էին օտարված և դժգոհ ընտրազանգվածի հանրահավաքները:

17. 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության ժողովրդաիշխանության կառուցակարգում կատարված նորամուծություններից էին՝ ընտրական իրավունքի սկզբունքների շրջանակում «ընտրության ազատության» ամրագրումը, տեղական ինքնակառավարվող համայնքների ղեկավարների ընտրության ուղղակի կամ անուղղակի այլընտրանքի, կոլեկտիվ հանրագրի իրավունքի, քաղաքացիական նախաձեռնության կարգով խորհրդարանին օրինագիծ առաջարկելու իրավունքի ամրագրումը, տեղական ինքնակառավարման և հանրաքվեի առաջադիմական վերակառուցումը: Այն ընդլայնեց հանրաքվե նախաձեռնող սուբյեկտների շրջանակը, դրանում ներառեց

քաղաքացիներին՝ 200.000 (սահմանադրական հանրաքվեների առանձին տեսակի դեպքում), 350.000 (օրենսդրական լրացուցիչ հանրաքվեի դեպքում):

18. 2015 թ. Սահմանադրությունը և դրա հիմքով ընդունված օրենքները չլուծեցին ժողովրդաիշխանության արդեն ամրագրված առանձին ինստիտուտների մի շարք խնդիրներ: Ապագա սահմանադրական բարեփոխումների ու ընթացիկ օրենսդրման խնդիրն է լուծել դրանք, սահմանել անմիջական ժողովրդաիշխանության նոր ձևեր և՛ տեղական, և՛ համապետական մակարդակներում: Միայն այս դեպքում իրականություն կդառնա Սահմանադրական փոփոխությունների Հայեցակարգի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի առաջարկած «անմիջական ժողովրդավարության բոլոր հնարավորությունների բացահայտումը», անմիջական ձևերի խելամիտ զուգակցումը ներկայացուցչականի ներուժի հետ:

19. Ներկայումս ապագայի շահերից ելնելով անհրաժեշտ է զարգացնել ժողովրդաիշխանությունը, արմատավորել ժողովրդավարական մշակույթ և իրավական համաուսուցում, ինչը շատ կարևոր է ժողովրդավարության բազում նախադրյալների մեջ: Ներկա կառավարության ծրագրում ժողովրդաիշխանության զարգացման միջոցառումներ չեն նախատեսված: Մյուս կողմից ակնկալվող սահմանադրական փոփոխությունների նախաշեմին կան առաջարկություններ վերադառնալ կիսանախագահական կառավարման ձևին: Քաղաքական զարգացման բոլոր վարկածների դեպքում ինքնակալության, հանրային մարմինների գերիշխանության, ժողովրդի իշխանությունը յուրացնելու միակ արգելափակիչ երաշխիքը կայացած, ամբողջացած ժողովրդաիշխանական համակարգն է: Այս օրինաչափության անտեսումը անխուսափելիորեն կբերի բացասական հետևանքների:

Ատենախոսության հիմնական դրույթների հրապարակումները.

1. «Ժողովրդաիշխանության ազատական հայեցակարգի սահմանադրական ամրագրումը 1995 թ.»: Պետություն և իրավունք, Եր., 2018, թիվ 3-4(81-82), էջ 99-103:

2. «Սոցիալիստական դեմոկրատիայի հայեցակարգը և անմիջական ժողովրդաիշխանության ձևերի հիմնահարցը խորհրդային առաջին սերնդի սահմանադրություններում (1918-1926 թթ.)»: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիր. և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2)2018 ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, էջ 42-51:

3. «ՀՀ անկախության հռչակումը և քաղաքական զարգացման հիմնադիր սահմանադրական ուղղության ընտրությունը. գործոնները և արդյունքները»: ՀՀ ՍԴ Տեղեկագիր, N 4(92), Երևան, 2018, էջ 7-19:

4. «Անմիջական ժողովրդաիշխանության ձևերի սահմանադրական և ընթացիկ օրենսդրական հիմնահարցերը 1996-2015 թթ.», Հանրային կառավարում գիտական հանդես, 5/2018, Երևան, էջ 167-177:

5. «Ժողովրդավարության ու իշխանության իրականացման ձևերի համաշխարհային միտումները նոր դարաշրջանում և հայ քաղաքական-իրավական միտքը»: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(1), 2018, ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. ԵՊՀ հրատ., Երևան, 2018, էջ 42-53:

6. «Ժողովրդավարության սկզբունքը. իրականացման անմիջական ձևերի սահմանադրական ամրագրման համեմատական վերլուծություն», Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, N 114/2019, էջ 49-55:

АБАДЖЯН РОЗА

ИСТОРИЧЕСКАЯ ЭВОЛЮЦИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИСТОКОВ И ИНСТИТУЦИОНАЛЬНО–ПРАВОВЫХ ФОРМ НЕПОСРЕДСТВЕННОГО НАРОДОВЛАСТИЯ В ПРАКТИКЕ НОВЕЙШЕГО ПЕРИОДА КОНСТИТУЦИОННОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

Целью диссертации является выявление истории закрепления и применения непосредственных форм народовластия в трех армянских республиках, обнаружения закономерной связи между ними с одной стороны, и национальными успехами и неудачами с другой стороны, использование основанных на этих закономерностях научных рекомендаций для совершенствования механизмов народовластия в современной конституционной системе, для превращения его в условие, способствующее требованиям развития страны.

Предмет исследования включает историю юридического закрепления и правогого развытия форм непосредственного народовластия в политических системах трех республик Армении, теории, на которых основано законодательство этой отрасли каждой из республик, и проблемы правоприменения.Важной частью предмета исследования является история внедрения и укоренения форм непосредственного народовластия в современной республике, условия и факторы, которые имели влияние на этот процесс, характерные закономерности и тенденции, недостатки и преимущества.

Диссертация выделяется проведенными в рамках своего исследовательского предмета социальными опросами, которые были предприняты для выявления степени удовлетворенности населения современным состоянием демократии.

Научная новизна диссертации сводится к тому, что в целостном, систематизированном, регулярном порядке исследованы институты непосредственного народовластия в трех республиках Армении, особенности правового закрепления, осуществления и функционирования их форм, концептуальные характеристики, лежащие в основе каждого типа народовластия.Одним из ключевых достижений диссертации является рассмотрение процесса передачи власти или формирования нового и новой общественной власти с точки зрения легальности и легитимности. Из основного либерального принципа народовластия ,,от народа, народом, для народа,, автор делает вывод о том, что процесс формирования новой общественной власти или процесс передачи ее другим политическим силам в определенной конкретной политической ситуации должен быть не только легальным, но и легитимным. Если обеспечение требования законости не всегда возможно, в зависимости от политико-правовой ситуации, то требование легитимности должно быть соблюдено.

Другим важным выводом является оценка политических процессов демократизации в третьей республике Армении, согласно которой с 1995 года в Армении принято мажоритарное (а не инклюзивное) видение народовластия в его консервативном варианте. Недостатки демократических процессов в Республике Армения являются также следствием этого.

Важным достижением является также разработанный и обоснованный автором постулат о том, что из конституционного принципа суверенности народа вытекает ,,источник власти - народ может делать все, что не запрещено Конституцией и законами,,. Легистическое правомышление ,,народ может делать все, что определено Конституцией,, создает политико-правовые предпосылки для присвоения власти народа. Установление во второй статье Конституции только двух форм непосредственного народовластия является не ограничением, в смысле недопущения других форм, а гарантией их обязательного предоставления законадательным органом. Изменения Конституции 2015г. расцениваются автором как процесс расширения круга форм осуществления народовластия и частичного совершенствования действующих форм. Однако, законы, принятые на ее основе не разрешили ряд вопросов отдельных институтов перешедших из предыдущих периодов, а некоторые новеллы породили новые проблемы. Проблема будущего заключается в улучшении и разумном сочетании непосредственных и представительных форм, раскрытие всех возможностей и потенциала непосредственных форм, что является гарантией становления ответственного, подотчетного общественного управления, управления от народа, народом и для народа.

В исследовании предпринята попытка не только представить в целостном виде правовую историю становления института народовластия, но и разработать практические предложения по совершенствованию и обеспечению необратимости народовластия. В работе разработаны основные элементы будущей правовой политики в сфере народовластия – совершенствование и оптимизация существующих видов, внедрение некоторых новых, юридически незакрепленных форм, демократическая социализация и правовое воспитание населения, непрерывное применение форм народовластия.

ABAJYAN ROZA

HISTORICAL EVOLUTION OF THEORETICAL ORIGINS AND INSTITUTIONAL-LEGAL FORMS OF DIRECT DEMOCRACY IN THE PRACTICE OF CONTEMPORARY CONSTITUTIONAL DEVELOPMENT OF ARMENIA

SUMMARY

The purpose of the dissertation is to identify the history of consolidation and application of forms of direct democracy in three Armenian republics, try to detect its national successes and failures on one hand and its regular connection on the other hand, as well as it intends to use the scientific consultation based on the above-mentioned patterns to improve the democracy mechanisms in the modern constitutional system, making it a condition that contributes to the country's development requirements.

The subject of study of the present dissertation includes the history of legislative consolidation of forms of direct democracy and their legal status in political structure in three Armenian republics, theories of legislation of that sphere and law enforcement issues of each of the above-mentioned republics.
An important aspect of the research subject is the history of the implantation of forms of direct democracy in the present-day Republic as well as the factors and conditions that had an impact on that process, its characteristic patterns and trends, disadvantages and advantages.

The dissertation is distinguished by the social surveys conducted within its framework, which were undertaken to identify the degree of satisfaction of the population with the current state of democracy.

The scientific novelty of the study is conditioned by the comprehensive and systemic order of the research on intuitions of direct democracy in three republics of Armenia, the peculiarities of legal consolidation, implementation and functioning of its forms, conceptual characteristics underlying each type of democracy. One of the most important achievements of the dissertation is viewing the processes of the transfer of people's power and the formation of the new public authority from the perspective of legality and legitimacy. The author concludes from the main principle of liberal democracy "from the people, by the people and for the people" that in some concrete political situations the formation of a public authority or the procedure of transferring power to the other political forces has to be not only legal, but also legitimate. If maintaining the demand for legitimacy is not always possible due to political-legal conditions, the legitimate transfer method has to be preserved.

Other important conclusions include the evaluation of democratic political processes in the Third Armenian Republic, according to which starting from 1995 the majoritarian (not inclusive) vision of democracy in its conservative form was adopted in Armenia. The flaws of the social processes that took place in Armenia are also the results of the above-mentioned democracy.

Another important accomplishment is the statement developed and justified by the author that the constitutional principle of democracy presumes that "the people owning the power can do anything which doesn't contravene the Constitution and the laws". People "can do anything prescribed by the Constitution" legistic mentality sets political-legal preconditions for the appropriation of the people's power. The ascertainment of two types of direct democracy in the second article of the Constitution is not a scope limit by prohibiting the other types, but rather a guarantee so the legislative power does not even intend not foreseeing them. The author evaluates the constitutional amendments of 2015 as a process of expanding the scope of people's power execution forms and perfecting the already existing ones. However, the laws adopted on the basis of the above-mentioned constitutional amendments didn't resolve the previous issues of specific institutes that were handed over and some novelties caused the new ones. The future solution will be the reasonable and improved combination of direct and participatory democracies, the detection of all the possibilities and potential which will guarantee the establishment of the responsible, accountable public authority from the people, by the people and for the people.

The study attempted not only to present the comprehensive legal history of the establishment of the institution of democracy, but also to submit practical proposals for improving and making democracy irreversible. The research paper develops the basic elements of legal policy of the democracy – improvement of the existing forms, consolidation of nonexistent ones, democratic socialization and legal education, continuous use of forms of democracy.